ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի << Սուսերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ- ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ պատմություն (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

ՈՒսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

10. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի:
11. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ):
12. Անձը հաստատող փաստաթուղթ:
13. (Հանրակրթության մասին) ՀՀ օրենքի 28 –րդ հոդվածի 1 – ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում):
14. Ինքնակենսագրություն (Ձև 5)
15. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ – ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:
16. ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ:
17. Հրատարակած հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ (առկայության դեպքում):
18. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 8-ից հունվարի 19-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը , բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունվարի 25-ին ժամը 14:00-ին, Սուսերի միջնակարգ դպրոցում, հասցեն ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք,Սուսեր բնակավայր 1-ին փողոց , շենք 21:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով ՝ 098 78-09-76